

**JONATHAN AVES, POST-SOVIET TRANSCAU-  
CASIA, POST-SOVIET BUSINESS FORUM,  
ROYAL INSTITUTE OF INTERNATIONAL  
AFFAIRS, LONDON, JANUARY 1993, x + 54  
PAGES.**

**Ա. ՍԱՆՃԵԱՆ**

Խորհրդային Միության քայքայումէն ետք Անդրկովկասը դուրս եկաւ շուրջ երկհարիւրամեայ ուսական անմիջական տիրապետութենէն: Այդ տարածքին վրայ գոյացած եւ միջազգայնօրէն ճանչցուած երեք Հանրապետութիւնները, ինչպէս նաեւ առնուազն երկու այլ «ինքնահռչակ» (իմա՝ միջազգային ճանաչման չարժանացած) պետական միաւորումներ՝ Աբխազիան ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը սկսան համեմատաբար ինքնուրոյն քաղաքականութիւն մը վարել: Դժբախտաբար, անդրկովկասեան Հանրապետութիւններու անկախութեան վերականգնումին ուղեկցեցաւ այդ Հանրապետութիւններու միջեւ, ինչպէս եւ առնցմէ երկուքէն ներս՝ ազգային արիւնայի հակամարտութեանց բռնկումը, որուն շափերը օրէ օր կ'ընդլայնին, եւ որուն մէջ սկսած են ներքաշուիլ արեւմտեան ու չրջանային հզօր տէրութիւնները եւ զոր լուծելու կամ առնուազն սառեցնելու միջազգային կազմակերպութիւններու ջանքերը առ այժմ որեւէ շօշափելի արդիւնքի չեն յանդած: Գլխաւորաբար պատերազմական այս իրավիճակին հետեւանքով՝ արեւմտաեւրոպական ու հիւսիսամերիկեան պատմաբաններն ու քաղաքականագէտները վերջերս սկսած են համեմատաբար աւելի մեծ ուշադրութիւն դարձնել ինչորոյ առարկայ տարածքաշրջանին եւ իր էթնիկական ու տարածքային խընդիրներուն: Ճոնըթըն Էյվզի գրախօսուող աշխատութիւնը այս ուղղութեամբ առաջին յաջող փորձերէն մէկն է:

Դոկա. Ճոնըթըն Էյվզը Լոնտոնի Համալսարանի Տնտեսագիտութեան ու Քաղաքականագիտութեան Դպրոցի ուսական կառավարութեան Հարցերու երիտասարդ դասախօսներէն է: Ան յատուկ ուշադրութիւն կը դարձնէ յետ-Համայնավարական եւ անցման շրջանի օրինաչափութիւններու բացայայտման, եւ յատկապէս՝ Անդրկովկասի իրադարձութիւններուն: Գրախօսուող գիրքի պատրաստութեան ընթացքին, Էյվզը գիտահետազոտական նպատակներով մի քանի անգամ այցելած է Վրաստան եւ Հայաստան, իսկ գիրքի հրատարակիչն էլ են ինչն ետք՝ վերջերս՝ նա՛եւ Ատրպէյճան:

Էյվզի Յետ-Խորհրդային Անդրկովկաս վերնագրուած համառօտ գործը գլխաւորաբար կը կեդրոնանայ 1992 թուականի իրադար-

ձուլութիւններուն վրայ: Անոր առաջին երկու գլուխները կը կրեն ներածական բնոյթ եւ կը փորձեն ուրուագծել երկրամասի էթնիկական եւ ազգաբանական տարաբնոյթ պատկերը: Ապա, մէկական գլուխ յատկացուած են անկախ Ատրպէյճանի, Հայաստանի եւ Վրաստանի ներքին իրադրութեանց վերլուծման, ու հաս մըն ալ՝ Լեռնային Ղարաբաղի տաղնապին: Վերջաբանին մէջ էյվզը կը փորձէ կանխագուշակել երեք հանրապետութիւններուն անցնելիք յետագայ ուղին: Իր եզրակացութիւնները բաւականին յոռետես են: Կ'ընդգծէ թէ երկրամասին աշխարհաքաղաքական դիրքը եւ իր տարաբնոյթ էթնիկական կառուցուածքը շատ պիտի դժուարացնեն կայուն ազգային պետութիւններու հաստատումն ու զարգացումը, բայց յոյս կը յայտնէ միաժամանակ թէ անոր տնտեսական ներուժը կրնայ պատճառ հանդիսանալ, որ միջազգային համայնքը աւելի մեծ ուշադրութիւն ցուցարեւրէ երկրամասի ներքին հակամարտութեանց քաղաքական լուծումներու որոնման:

էյվզը բարձր կարծիք ունի Հայաստանի յետ-խորհրդային իշխանութեանց ու ՀՀԾ-ի նկատմամբ: Ըստ անոր՝ այժմ Հայաստանն Անդրկովկասի ներքնապէս ամենակայուն հանրապետութիւնն է: Հայաստանի հակա-խորհրդային ազգային շարժումը կարողացած է ստեղծել համեմատաբար բնագործակ խարխիւ մը, ուր ներառնուած են ոչ միայն այդ շարժման սկզբնական շրջանի ղեկավարութիւնը, այլեւ շատ ու շատ երիտասարդ մտաւորականներ եւ նոյնիսկ նախկին համայնավարական կարգերու ներկայացուցիչներ: Այս լայն խորիսի շնորհիւ է, որ համայնավարները Հայաստանի մէջ աւելի հեշտ համակերպեցան նոր իշխանութեան, եւ Հայաստանը կրցաւ հեռու մնալ ներքին արինահեղութենէ: Հայաստանի նոր կառավարութեան կողմէ նախաձեռնուած տնտեսական բարեփոխումները — ըստ էյվզի — խիզախ են, բայց չըջահայեաց: Լեւոն Տէր Պետրոսեանն կը գնահատուի իբրեւ ճկուն քաղաքագէտ, որ կը կարողանայ նոյնանման քաղաքականութիւն վարել Հայաստանի աւելի հզօր հարեւաններուն նկատմամբ:

Այս բոլորը գնահատականներով հանդերձ՝ էյվզը անտես չ'ըներ Հայաստանի առջեւ ծառայած երկարժամեայ դժուար խնդիրները, որոնք կրնան նոյնիսկ հարցականի տակ առնել Հայաստանի իբրեւ անկախ պետութեան գոյատեւման փաստը: Այդ խնդիրներուն մէջ առանձնացնելէ ետք բնական հարստութիւններու սակաւութիւնն ու ծովային ելքի բացակայութիւնը՝ էյվզն աւելի երկար կը վերլուծէ այն հնարաւոր հետեւանքները, զորս ատրպէյճանական ուղղման յաղթանակներու շարք մը կրնայ ունենալ Հայաստանի ներքին կայունութեան վրայ: Ան հնարաւոր համարելով ատրպէյճանական

ղիւրքերու համեմատական ամրապնդումը եթէ պատերազմը երկարի՝ կ'ենթադրէ թէ Հայաստանն այդ պարագային պիտի ստիպուի պաշտօնապէս ճանչնալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը եւ նոյնիսկ յայտարարել վերջինիս հետ իր միաւորման մասին: Էյվզը մտաւախութիւն կը յայտնէ, որ ղէպքերու այսպիսի զարգացում մը կրնայ անմիջականօրէն զարաբաղեան հակամարտութենէն ներս ներքաշել Ռուսաստանն ու Թուրքիան:

Գրախօսուող ուսումնասիրութիւնը հրատարակուած է բրիտանական նշանաւոր Միջազգային Յարաբերութիւններու Արքայական Ինստիտուտին կողմէ՝ «Յետ-Պորհրդային Առեւտրական Ֆորում» շարքով, որ կը հովանաւորուի միջազգային դրամատիրական շատ մը հանրայայտ ընկերութիւններու կողմէ: Անոր նպատակը, ուրեմն, նախկին ԽՍՀՄ-ի տարածքին վրայ յառաջացած նորանկախ երկիրներու մէջ ներդրումներ կատարել ցանկացող ընկերութիւններուն ուղեցոյց հանդիսանալն է: Երբ Անդրկովկասի մէջ ղէպքերը բառացիօրէն կը փոխուին օրէ օր՝ իրաւունք չունինք խստապահանջ ըլլալու, որ էյվզի կատարած իւրաքանչիւր կանխատեսումը բռնէ ժամանակին քննութիւնը: Այսուհանդերձ՝ այս փոքրածաւալ աշխատութեան մէջ իսկ, որ վերջի վերջոյ կովկասագիտութեան բնագաւառին մէջ իր առաջին փորձն է լոկ, ան ի յայտ կու գայ իբրեւ հաւասարակշռուած, խորաթափանց եւ խոստումալից ուսումնասիրող մը:

Էյվզը կը տիրապետէ անդրկովկասեան երեք հիմնական լեզուներէն ե՛ւ ոչ մէկուն: Ան իր ուսումնասիրութիւնը կառուցած է բացառապէս անգլերէն ու ռուսերէն սկզբնաղբիւրներու հիման վրայ՝ չմոռնալով օգտագործել նաեւ Անդրկովկասի մէջ լոյս տեսնող ռուսատառ մամուլը (Պաքիստի Ռապոչի եւ Սվոպոտնայա Կրուզիա), ինչպէս եւ ԱՄՆ-ի եւ Մեծն Բրիտանիոյ մէջ հրատարակուող սփիւռքահայ անդլիտառ պարբերականները, յատկապէս՝ Արմինիքն Ինթըրնեշնըլ Մեկըզիմը (ԷՅՄ): Տեղական լեզուներու իմացութեան բացակայութեան հետեւանքով յառաջանալիք հնարաւոր բացթողումները ան կրցած է մեծ մասամբ կանխել խնդրոյ առարկայ տարածքաշրջան կատարած իր մի քանի ուղեւորութիւններով:

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ